95. ՏԱՆՁԱՏԱՓ գյուղից հյուսիս «Ավարանցի խաչ» կոչված վայրում, անտաշ քարերով շինված թաղակապ եկեղեցու բեմի բարձրության քիվին. 1 տող.

--ՀԱՅՐԹԱԴԷՈՍ ՇԻՆՈՂՄԲԵԿԵՂԵՑԻՅՍՅԻՇԵՑԷՓ ԻՔՍ

ԵՍ՝ ՀԱՅՐ ԹԱԴԷՈՍ ՇԻՆՈՂ, ՄԲ ԵԿԵՂԵՑԻ[Ց]Ս ՑԻՇԵՑԼՔՔ Ի ՔՍ:

96. ՏԱՆՁԱՏԱՓ գյուղից հյուսիս, «Ավարանցի խաչ» վայրում անտաշ քարերով շինված թաղակապ եկեղեցու բեմի ներքևի ճակատին. նախորդի անմիջական տակը. 4 տող.

---ՊԽՋԿԱՄԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅԵՍ ԳՐԻԳՈՐ ՎՂԱՐԴԱՊԵՏ
ԵՐՈՋԱՂԱՑԻ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑԻ ԻՄՈՑ ԵՏՈՒ ԸՆԾԱ
ՄԲԱԾԱԾՆԻՍ ԵՒ ՋՑՈՒՐԱ ՀՈՂՆ ԱՐԴՈՐՔ ԽԼԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ
ՋԱՆԱՆ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՆԻՆ ԵՒ ԴԱՏԻՆ ՑԱՑ

ՊԽՋ: ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՎՂԱՐԴԱՊԵՏ, ԳՆԵՑԻ ՋՀՈՒՆԵՐՈ ՋԱՂԱՑ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ ԵՒ ԵՏՈՒ ԸՆԾԱ | ՄԲ ԱԾԱԾՆԻՍ. ԵՒ ՋՑՈՒՐԱ ՀՈՂՆ, ԱՐԴ ՈՐՔ ԽԼԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ | ՋԱՆԱՆ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՆԻՆ ԵՒ ԴԱՏԻՆ ՑԱՑ:

ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) ԳՅՈՒՂ ԵՎ ԲՂԵՆՈ ԳԱՎԱՌԻ

ՆՈՐԱՎԱՆՔ

Այժմյան Բարձրավան գյուղը գտնվում է Գորիսի շրջանում, այն տեղավորված է Որոտան գետի աջ ափին. անգնդախոր ձորի գլխին բարձրացած քարափի վրայի հարթավայրում։ Հնում գյուղն ու իր շրջակայքը մտել են երբեմն Հարանդ գավառի մեջ և երբեմն կազմել առանձին գավառ—Բղենո գավառ, հավանաբար այդ շրջանում գտնվող Սյունիքի նշանավոր ու անառիկ բերդերից մեկի՝ Բղեն բերդի անունով։

Գյուղի հնագույն անունը հայանի չէ, միայն վերջին դարերից է հիշատակված Երիցաթումբ անունը, որը վերջին տարիներում վերանվանվել է Բարձրավան։

Բարձրավան գյուղի սահմաններում այժմ կան հետևյալ հուշարձանները.

1. Գյուղամիջի եկեղեցի. վերակառուցված է 19-րդ դարում. սրա կտուրին կանգնեցված է մի այլ տեղից վերցրած խաչքար՝ 14-րդ դարի արձանագրությամբ։

2. «Քրատակի ս. Մինաս» եկեղեցի. գտնվում է դեպի Որոտան իջնող ձորալանջին, մոտ երկու կիլոմետր գյուղից հեռու։ Եկեղեցին շինված է կոփածո քարերով և թաղակապ է. միայն ներսից, բեմի կամարը սրբատաշ քարերով է շինված։

Եկեղեցու բակում կան մի քանի խաչքարեր և ժայռաբեկորներ, որոնցից մի քանիսի վրա կան արձանագրություններ։

3. «Բղենո գավառի Նորավանք». հուշարձանների խումբ. գտնվում է գյուղից դեպի արևելք՝ 3—4 կիլոմետր հեռու, Շուռնուխ տանող ճանապարհի մեջտեղում, ճանապարհից ձախ

մոտ 200 մետր մի լեռնային բազուկի ծայրին, երեք կողմից շրջապատված խորը և անտառապատ ձորերով. այդ վայրը տեղացիները կոչում են Ջհաննամ դարասի — Դժոխաձոր։

Հուշարձանների այժմ կանգուն խումբը բաղկացած է չորս շինքերից, ամփոփված մի ծածկի տակ։

Կենտրոնում մի փոքրիկ եկեղեցի, որին հարավից և հյուսիսից կցված են ավելի ևս փոքր սենյակներ և այդ բոլորի ասաջ, արևմուտքից, մի շատ գեղեցիկ սրահ-դավիթ։ Հուշարձանների այս խումբը հատակագծային, ճարտարապետական, զարդաքանդակների և մանավանդ պատկերաքանդակների առատությամբ և նորությամբ առանձնակի տեղ են գրավում մեր միջնադարյան հուշարձանների շարքում։

Համաձայն արձանագրությունների՝ հուշարձանների այս խումբը շինվել-ավարտվել է 1062 թ.։ Այս խմբի հյուսիսային կողմում կան ուրիշ շենքերից մնացած հիմնապատեր։

Մինչև վերջերս անհայտության մեջ մնացած այս նշանավոր հուշարձանը, Ստ. Օրբելյանի կողմից մի հատուկ գլխի մեջ նկարագրած (Գլ. Խէ), Բղենոս գավառի Նորավանքն է[1]։

Ըստ պատմագրի հաղորդած տեղեկությունների այդ վայրում երկու անգամ են հիմնական կառուցումներ կատարվել. առաջին անգամ կառուցվել է հուշարձանների մի խումբ, բաղկացած եկեղեցուց, դավիթից, սրահից և ուրկանոցից. այս խումբը շինվել է Ստեփանոս քահանայի կողմից 936 թ. և բուն եկեղեցին կոչվել է ս. Սաեփաննոս[2]։

Հուշարձանների երկրորդ խումբը կառուցվել — ավարտվել է ըստ պատմագրի «յետ սակավուց» և ըստ արձանագրությունների՝ 1062 թ. Գևորգ և Հովհաննես կրոնավորների կողմից «յուժ գեղեցիկ յօրինուածօք, ի դրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք և խարսխաւոր ոեամբք ի հայր Գէորգեայ և ի Յովհաննիսէ քահանայէ»[3]։

Ներկայումս գոյություն ունեցող հուշարձանները այս երկրորդ անգամ շինվածներն են որոնց հյուսիսային կողմի ավերակները ըստ երևույթին, մնացորդներն են առաջին, ավելի վաղ խմբի շինություններին։

Գ. Սարգսյանի՝ նկարագրական և տեղագրական փաստերի վրա հիմնված՝ նույնացումը այս հուշարձանի՝ պատմագրի նկարագրած Բղենոս նորավանքի հետ ճիշտ համարելով, անհրաժեշտ ենք համարում ավելի հաստատուն փաստեր ևս ավելացնել։

Ստ. Օրբելյանն իր աշխատության այն գլխում (ԿԲ), որտեղ թվարկում է Սյունյաց աշխարհի գլխավոր վանքերը, երկիրը բաժանել է երեք մասի, Ա. բուն Սյունիք, Բ. Վայոց ձոր և Գ. Գեղարքունիք։ Այդտեղ էլ հիշատակված են երեք նորավանքեր, մեկը՝ բուն Սյունիքի մասում և երկուսը՝ Վայոց ձորում։

Այս երեք նորավանքերից միայն մեկն էր հայտնի մինչև վերջերս, դա Վայոց ձորի Ամաղու գյուղի մոտի հայտնի նորավանքն է, որը դարձավ նաև եպիսկոպոսարան (այժմյան Ազիզբեկովի շրջան) իսկ մնացած երկուսը՝ անհայտ են։

Բուն Սյունիքի նորավանքը իր պատմության ԽԷ. գլխում, պատմագիրը դասում է Բղենոս գավառի մեջ, ինչպես տեսանք վերևում, իսկ Բղենն գավառը պատմագրի աշխատության միջի հիշատակություններից պարզ երևում է, որ բռնում էր Որոտանի աջ ափը, Տաթևից դեպի հյուսիս արևելք, մի ժամանակ էլ հենց Տաթևը մտնում էր Բղենոս գավառի մեջ[4]։ Հենց այստեղ է գտնվում նաև այժմյան Բարձրավան գյուղը և մեր նկարագրած հուշարձանը։

---

[1] Այս հուշարձանի մասին մեզ տեղեկացրեց առաջին անգամ գրող Ակ. Բակունցը, որը պատահաբար տեսել էր որսի գնացած ժամանակ, 1932 թ.։ 1934 թ. հնագիտական գիտարշավի հետ մենք գտանք այն և մանրամասն ուսումնասիրեցինք և պատրաստեցինք աշխատություն, կրկին անգամ նույն նպատակով եղանք այնտեղ 1938 թ. Պատմական թանգարանի գիտարշավի հետ. մեր ուսումնասիրությունը ինչ-ինչ պատճառներով մնաց անտիպ։

Հուշարձանի մասին գրվել է առաջին անգամ «Էջմիածին» ամսագրի 1952 թ. 8, 4, 6 համարներում Գ. Սարգսյանի կողմից։

[2] «Էջմիածնի ավետարանի» հիշատակարան, էջ 230ա.— Դարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք Ձեռագրաց Ա. Անթէլաս, 1951, էջ 155—158։

[3] Ստ. Օրբելյան, էջ 246։

[4] Անդ էջ, 411։

Բայց ավելի հաստատուն փաստ մեզ հաջողվեց գտնել հենց հուշարձանի արձանագրությունների մեջ։ 1948 թ. գիտարշավի ժամանակ, լուսանկարիչ Պ. Գրիգորյանը հուշարձանների արևելյան ձորի լանջին հայտնաբերեց սպիտակավուն կրաքարից մի որմնախոյակ, որի վրա մնացել է խիստ մնասված արձանագրություն (այս բաժնի առաջին արձանագրությունը), որի վրա բարեբախտաբար ամբողջ են մնացել թվականը, և ՆՈՐԱՎԱՆԻՑ ու ՏՐ-ՍՏ անունները, որոնց վերծանությունը կլինի՝ 935, ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ և ՆՈՐԱՎԱՆԻՑ։ Այս երեք բառերը լրիվ կերպով ծածկում են պատմագրի հաղորդածը, որը հուշարձանների առաջին խմբի շինարարությունը ավարտված է համարում 936 թվ. Ստեփաննոս քահանայի կողմից և վանքն էլ անվանում է ՆՈՐԱՎԱՆՔ։

Ինչպես հայտնաբերված այս որմնախոյակը, այնպես էլ հուշարձանի շուրջը, մանավանդ հյուսիսային կողմում թափված քարերը սպիտակավուն կրաքար են, մինչդեռ այժմյան կանգուն հուշարձանների շինաքարի հիմնական մասը մուգ գույնի բազալտ է։

Այս բոլորը պարզում են, որ Ա. նկարագրված հուշարձանը իրոք որ Բղենո գավառի Նորավանքն է, Բ. ներկայումս կանգուն շենքերը երկրորդ հերթին շինվածներն են, որոնք ավարտվել են 1062 թ. և Գ. որ առաջին հերթին կատարված շինությունները, որոնք ավարտվել են 935—936 թթ., գտնվելիս են եղել նկրկա շենքերի հյուսիսային կողմում, նրանց շինաքարը հիմնականում եղել է սպիտակավուն կրաքար և այժմ դրանց հիմնապատերն են միայն մնացել։

Այս նորահայտ հուշարձանի անվան, կառուցման ժամանակի և կառուցողի անվան ճշտման շնորհիվ լուծվում է նաև մի այլ, կողմնակի, բայց շատ կարևոր խնդիր ևս։ Ինչպես հայտնի է, մեր ձեռագիր մատյաններից «Էջմիածնի ավետարանը» հնագույն և լավագույնն է, գրված 10-րդ դարում, լավագույն մագաղաթի վրա, զարդարված մանրանկարներով, և հռչակված մեծարվեստ ու հազվագյուտ իր փղոսկրե կազմի շնորհիվ։ Այս ձեռագրի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն նրա գրչության վայրը մինչև այժմ էլ մնացել է վիճելի և անորոշ։ Ձեռագրի ընդարձակ հիշատակարանից հայտնի է, որ այն գրված է 989 թ., Նորավանքում, գրիչն է Յովհաննես և ստացողը՝ «Ստեփաննոս կրաւնաւոր եւ քահանայ հալկազնեան»[1]

Որովհետև աղբյուրներում հիշատակվող մի քանի Նորավանքերից մինչև այժմ հայտնի էր միայն Ամաղուի Նորավանքի տեղը, իսկ վերջինիս շինության ժամանակն ու մանրամասնությունները ինչպես և շինարարների անունները չէին համընկնում ձեռագրի հիշատակարանի մեջ նկարագրվածներին, այդ պատճառով էլ «Էջմիածնի ավետարանի գրչության» վայրի խնդիրը վեճերի առարկա էր և չէր լուծվում։

Բղենո գավառի Նորավանքի վերաբերյալ շարադրած մեր վերևի փաստերը, մանավանդ հուշարձանի հնագույն շրջանի շինարարության մասին հայտնաբերված արձանագրությունը (№ 91) լրիվ կերպով համընկնում են ձեռագրի հիշատակարանի մեջ նշվածներին, որով մեր այս նշանավոր ձեռագրի գրչության վայրի խնդիրը ստույգ կերպով լուծվում է. այն գրված է Բղենո գավառի Նորավանքում, հուշարձանի առաջին խմբի գոյության ժամանակ, ձեռագրի մեջ հիշատակվող Ստեփաննոսը, որը «հիմնարկեալ ի սմա զվկայարան նուլնանուն իւր սրբոյ Նախավկային Ստեփաննոսի» նույն անձնավորությունն է, որին Ստ. Օրբելյանը համարում է Բղենո գավառի Նորավանքի հիմնադիր և հաստատվում է մեր № 91 արձանագրությամբ, իսկ ձեռագրի ստացողը վերջինիս եղբորորդի և հաջորդներից է։

---

[1] Գարեգին Ա. կաթողիկոս=Ցիշատակարանք Ձեռագրաց Ա. Անթիլաս, 1951, էջ 155—158։

Այս հիշատակարանի համառոտ հրատարակության վրա Սիսականում, մատնացույց արեց մեզ ճարտարապետ Ս. Մնացականյանը։

97. ՆՈՐԱՎԱՆՔ. արևմտյան ձորալանջում հայտնաբերված որմնասյան խոյակի վրա.

3Հս- 327	. . . . ՆՈՐԱՎԱՆԻՑ . . . . . ՄԻԱԿՐԱՎՔՋՍ. . .	.....ՆՈՐԱՎԱՆԻՑ ՁԵՌՆ ՏՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ | :ՅՁԴ: ..ՄԻԱԿՐԱՎՔ.....

Այս խոյակը գտնվեց հուշարձանից մոտ 200 մետր հեռու, ձորի լանջին, մացառների մեջ. գլորված է վերևից։ Խոյակը ունի երեք մշակված երես, որոնց վրա և արձանագրված, հետևաբար այն ինչ որ շինքի որմնասյան մասն է, ներկա շենքերից ոչ մեկը որմնասյուներ չունի, խոյակի գորշ քարն էլ միանգամայն տարբեր է ներկա շենքերի քարերից, որոնք մուգ գույնի են։

Արձանագրությունը ունեցել է 3 տող. առաջինը խոյակի նեղ քիվին, որը բոլորովին եղծված է. երկրորդը (մեր առաջին) նույն քիվի ներքևի գոգավորության մեջ է, ավելի փոքր տառերով և Ա. տառի ներսում շրջադարձ գծով. երրորդ տողը (մեր երկրորդ) քիվի ներքևի հարթության վրա ավելի խոշոր տառերով և Ա. տառի շրջադարձ գծի բացակայությամբ։

. . . ԼՍՆԳՆԱ . . .
. . . ՆԻՍ:ՆԼՐ . . . .
. . . ՀԱՍԹ-ԱՆԼ . . .

98—101. ՆՈՐԱՎԱՆՔ. ԲԱԿ, չորս արձանագրության մասեր.

. . . Ա . .
. . . ՀԻՄ . . .
. . . ԾԻՍ . . .

Հուշարձանի արևմտյան կողմում, բակում թափված քարաբեկորների վրա են. բոլոր բեկորներն էլ պատկանում են ներկա հուշարձանից ավելի վաղ գոյություն ունեցող շենքի, որովհետև գորշ և կարմրավուն քարեր են, նման նախորդ, № 97 որմնասյան խոյակի քարին։ № 92-ի երկրորդ տողավերջի տառերն էլ, :ՆԼՐ: կամ :ՆԼԲ թվական պիտի լինեն, որը նույնպես մատնացույց է անում դրանց հնությունը։ Ներկա շենքերի կառուցումը, ինչպես ցույց են տալիս №№ 102 և 104 արձանագրությունները, ավարտվել են :ՇԺԱ: թվականին։

. . . Լ . . .
. . . ՔԱՄ . . .

. . . Ս . . .
. . . Մ . . .
. . . ՀԵ . . .
. . . ԵԻՒ . . .
. . . ՆԱԿ . . .

102. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. երեսպատման ընկած մի քարի վրա. 12 տ.



Ի ԹՎ. ՀԱԼՑՈՑ Ի ՇԺԱ. Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ ՅՈՎԱՆՆՈՒ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ.....)
ՍԲ ՈՒԽՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ ԵՒ ՋՏՆ.....
ԱՇԽԱՏՈՒԹԲ ՀԻՄՆԱՐԿԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՍՆ ՓՈԽՄԱՆ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԹԵՐԱԿԱՏԱՐ ՄՆԱՑԵԱԼ ԷՐ ԵՍ ՀԱՅՐ ԳԻՈՐԳ ՀՐԱՍԱՆՈՎ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿԱՏԱՐԵՑԻ ՇԻՆՈՒԹԲ ԵՒ ԱՒՀՐՆԵՑԻ ՅԱՒԳՆԱԿԱՆՈՒԹԲ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ. ԱՐԴ ՈՎ ՍԲ ՀԱՐՔ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՈՐՔ ԱՂԱԹԷՔ ՀԱՆԱ . . .
Ի ԱԾԸՆԿԱԼ ՍՐԲՈ ՍԵՂԱՆՈՑՍ . . . .
—ԵԱՆՍ ՅԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ . . . . .

Արձանագրված քարն ընկել է եկեղեցու արևմտյան պատից, մուտքի հյուսիսային կողմից, նրա չափերն են 84×74. վերևի ձախ և ներքևի աջ մասերում շարվելու ժամանակի կտրվածքներ ունի։

Արձանագրության տողերի վերջին մասերը այլ քարի վրա պիտի լինեին, որը չկարողացանք գտնել. նույնը և շարունակությունը վերջից։

Սարգսյան Գ. «Էջմիածին» IV, 32, 1952 թ.
Լուսանկ. տախտ. X, 34.

103. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. ընկած երեսպատման մի քարի վրա. 7 տող.



ՅՈՑՍ ԱՆԿԵԱԼ ԱՂԱՋԵՄ ՋՋԵՋ ՍԲ ԵՒ ԱԾԱՀԱՃՈ ԵՂԲԱՐՔ ՈՐՔ ԱՂԱԹԷՔ | Ի ՍԲՈՑ ԵԿԵՂԵՑՅՈՋԴ ԵՒ ԱՌԱՋԻ ԱԾԸ | ՆԿԱԼ ՍԲՈՑ ՍԵՂԱՆՈՑԴ ՋԻՍ ՋՏ | ԱՌԱՊԵԱԼՍ ՋՀԱՅՐ ԳԻՈՐԳ ՋՊԱ | ՇԽԱՏԱՒՈՐ ԵՒ ՋԿԱՏԱՐԻՋ ՍԲՈՑ | ԵԿԵՂԵՑՈՑՍ ՅԻՇԵՑԷՔ.

Առաջին և երրորդ տողում ՍԲ առանց պատվի.
Երրորդ տողի վերում ԱԾ առանց պատվի.
Երրորդ տողում՝ ԵԿԵՂԵՑՈՋԴ բառի մեջ ԵՑ տառերը բաց են թողնված.
Սրահի հատակը մաքրելիս այս քարը գտնվեց եկեղեցու մուտքի առաջ. ընկած պետք է լինի նախորդ արձանագրության մոտակայքից, լայնությունը 60 սմ.
Արձանագրության սկզբի տողերը այլ քարի վրա պիտի լինեին։

Սարգսյան Գ. «Էջմիածին» IV, 32 1952 թ.
Լուսանկ. տախտ. X, 35

104. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. ընկած երեսպատման մի քարի վերին եզրին. 2 տող.

ԻՄԻՍՈՒՄՆ : ԿԱՏԱՐԵՑԱՒ ԸՆ | ԵԿԵՂԵՑԻՍ
ԵԿԵՂԵՑԻՍԻ ՀԱՄԵՇՏԱՒՈՐՆ | Ի ՀԱԼՑՈՑ | ԹՎ. : ՇԺԱ. : ԱԻՀՐՆԵՑԱՒ.

Առաջին տողի մեջ ՍԲ առանց պատվի.

Երկրորդ տողի մեջ ԱԻՀՐՆԵՑԱՒ վերականգնում ենք № 102-ի ութերորդ տողի հետևությամբ։

Սրահի հատակը մաքրելիս գտնվեց այս քարը՝ նախորդի կողքին. ընկած պետք է լինի նախորդ երկուսի մոտակայքից.

Սարգսյան Գ. «Էջմիածին», IV, 32, 1952 թ.
Լուսանկ. տախտ. X. 36

105. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. ընկած երեսպատման քարի բեկորի վրա. 7 տ.

– ԼՆՅԱՒՅՍՍ . . . . . ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՑՑ
ԱՄԱՄՈՅՑԱՑ . . . . . ԱՆԸՐԸՆԿԱԼ . . . . . ՅԱՂԱԹԻՒ ՁԵՐ ՁԻ
. . . ՍԶԵՐՁԻԳՏԻՑ . . . . . ԳՏԻՑ . . . . . ԱՂԵՂ ԱՏԵՆԻՆ ԱՌԱՋԻ
. . . . . ՀԵՂԱՄԵԵՆԱՒԱՀԻ . . . . . .
. . . . . ԵՍ ԻՍԻԱՑՁ . . . . . .
. . . . . ՍՄԱՆԵԻ . . . . . .
. . . . . ՅՈՆԱՅ . . . . . .

Հայտնաբերվեց սրահի հատակը մաքրելիս՝ եկեղեցու մուտքի առաջից. լայնությունը 63 սմ

Արձանագրության վերջի մասն է, որովհետև վերջին տողից հետո բաց տարածություն է։

– ՈՅՅՍՍՍ . . .
ՉԵԼԵԱՅԼ . . .
. . . . . .

106. ՆՈՐԱՎԱՆՔ. ԵԿԵՂԵՑԻ. ընկած երեսպատման քարի բեկորի վրա, որը գտնվեց սեղանի առաջը մաքրելիս.

107. ՆՈՐԱՎԱՆՔ. ընկած և կոտրատված երեսպատման քարի վրա.

. . . . ՀՐԱՄԱՆ—
ՈՎ ԱՑ ՊՍԱԿԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻ

Գ. Սարգսյան, «Էջմիածին», IV, 32, 1952 թ.։

108. ՆՈՐԱՎԱՆՔ. ընկած և կոտրատված երեսպատման քարի վրա. 6 տ.

ՀՐԱՄԱՆ
ՈՎ ԱՑՊՍԱԿԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻ
ՁՈՐ ՏՐ ԱԾ ԱՆՍԱՄԱՆ ՊԱ-
ՀԵՍՑԷ ՁԱԹՈՌ ԹԱԳԱՎՈՐՈՒ-
ԹԵԱՆ ԻՒՐՈՑ ՄԻՆՉԵՒ Ի ԳԱԼ-
ՈՒՍՏՆ ԻՒՐ։

Այս բոլոր բեկորները շինարարության ժամանակ գրված արձանագրության մասեր են, միևնույն ոճի և հավանաբար, նույն գրչի ձեռագործ։

Վերջին երկուսը մենք չենք տեսել. հայտնաբերվել են հուշարձանի մաքրման ընթացքում։

Գ. Սարգսյան. «Էջմիածին», IV, 34, 1952 թ.։

109. ՆՈՐԱՎԱՆՔ ՍՐԱՀ. արտաքուստ. կենտրոնական կամարի ճակատին. 3 տող.



Ո, ՅՍ. Ա՛Ծ. ԷԱԿԱՆԴ ԼՈՅՍ. ԷԴ Ա՛Ծ ԵՒ ՀՈԳԻԴ ՍԲ ՅԱՑ ՀԱՒՐԷ ԱՆՍԿԶԲՆԱԲԱՐ ԾԱԴԵԱԼ Ա՛ԾՊԵՏԱԿԱՆ | ՏԵՍԶՈՒԹԲ Ի ԳԵՐԱԿԱՒ ԿԱՄԱՐԱՑԴ ՔԵՒ ՍՐԲԵՑԵԼՈՅ ԱՌ ՍԿԶԲՆԱԼՈՅՍԴ Ա՛Ծ. ՀԱՅՐ, ԶՄԱՏՉԵԼՆ ՆԵՐԱ՛ԾԵԱԼ ԲԵՐԵՍ |, ԸՆԴՈՐՍ ԱԿՆ ԱՐԿԵԼ ԱՐԺԱՆԱՑՈ ՔՍ Ա՛Ծ ԵՒ ՑՍՏՈՐԱԿԱԵԱԼՍ ՅՈՎԱՆՆԷՍ ՈՂՈՐՄՈՒԹԲՔՈ։

Առաջին տողի սկզբի ՅՍ և Ա՛Ծ բառերը ուռուցիկ են։ Երկրորդ տողի տառերը առաջինից մանր, իսկ տողասկզբին և տողավերջին ավելի մանր. երկրորդ տողի կենտրոնում ՍՐԲԵՑԵԼՈՅ բառի վերջին Յ-ից առաջ բաց տեղ քարը վնասված լինելու պատճառով. Երրորդ տողը մանրատառ է։ Տողերի և տառերի մեծությունները հարմարեցրած են կամարի վրա եղած տարածությանը, որով և ստացվել են տարբերությունները՝ կենտրոնում մեծ և ծայրերում փոքր։

Գ. Սարգսյան, «Էջմիածին», IV, 34, 1952 թ.։

110. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. ներքուստ. հուսիսային մուտքի բարավորի վրա. 3 տող.



ՅՍ. ՔՍ. Ա՛Ծ. ԲԱՆԴ ԱՆՍԿԶԲՆԱԿԱՆ ԲՈԼՈՐԻՑ ՍՐԲԵՑԵԼՈՅ ԵՒ ՆԵՐՔՈ ՁԵՌԻՆ ՔՈ ՀԵՏԵՒԵԱԼՍ ԱՐԺԱՆԱՑՈՅ ՁՍՏՈՐԱԿԱՑԵԱԼՍ ՅՈՎԱՆՆԷՍ.

Երկրորդ տողի վերջին ԱՐԺԱՆԱՑՈ բառի սկզբի Ա տառից հետո բաց տեղ. գրելու ժամանակ քարը վնասված է եղել։

Գ. Սարգսյան, «Էջմիածին», IV, 34. 1952 թ.

111. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. ներքուստ հարավային մուտքի բարավորի վրա. 2 տող.



ՔՍ. Ա՛Ծ. ԲԱՆԴ ՔԵՒ ՓՐԿԵՑԵԼՈՅ ՀԱՄԱՅՆՅՆ ՀԱՂ ՈՐԴԻՎ ԱՐԺԱՆԱՑՈ ՁՏԱՐԱՊԱՏԿԻՆԵԱԼՍ ՅՈՎԱՆՆԷՍ։

Այս երեք արձանագրությունները (109, 110, 111) գրված են շատ գեղատառ և վերաբերում են հուշարձանի մեկենասներից մեկին, Սյունյաց Եպիսկոպոս Հովհաննեսին, (1006—1058 թ.)։

Գ. Սարգսյան, «Էջմիածին», IV, 14, 1952 թ.։



112. ՆՈՐԱՎԱՆՔ. ՍՐԱՀ. *արաաքուստ. արևմտյան կամարակապ մուտքի հյուսիսային կողի որմնասյան վրա վերից վար. 20 տող.*

Ցուրաքանչյուր տողը բաղկացած է 3—4 տառից, միայն վերջին տողն ընդգրկում է կիսաշրջան որմնասյան ամբողջ կորությունը։

Արձանագրությունը խիստ հողնահարված է. տառերը հազիվ են նշմարվում։



113. ՆՈՐԱՎԱՆՔ. *մի լինկած քարի վրա.*

Միակաուր լուսանցքի ձևի քար է. Հալերեն Ս տառի նմանությամբ. հավանաբար եկեղեցու հյուսիսային սրահի արևելյան պատուհանին պիտի լիներ, ներսի կողմից. երկու կտորից է (կոտրված)։ Արձանագրության տառերը խիստ եղծված են։ Մեր նախկին արտագրությունը կորցրել ենք. 1938 թ. նորից եղանք տեղում, բայց այդ քարն արդեն չգտանք. մեր միակ լուսանկարն էլ վատ է. տողերը շարունակվում են աջ թեի վրա, որից լուսանկարի վրա ոչինչ չի երևում։

Ներքևի երկու տող հունարենում հավանաբար ԳՐԻԳՈՐ և ԱՆԱՍՏԱՍ բառերն են։

Լուսանկար. տախ. X, 37

114. ՆՈՐԱՎԱՆՔ. հուշարձանի կենտրոնական սրահի հարավային պատի՝ արևմտյան վերին անկյունում (հարավային սրահի մեջ) ագուցված պատկերաքանդակ կրող քարի վրա.



ՈՒՐԱԽ ԼԵՐ ՈՒ ԲԵՐԿՐԵԱԼ, ՏՐ ԸՆԴ Փ|ԵՁ.
ԱՀԱՅԱՒԱՍԻԿ ԿԱՄ ԱՂԱԽ|ԻՆ ՏՆ

Առաջին տողը մանրատառ է և վերին շրջանակի վրա. Երկրորդ տողը աջ կողքի շրջանակին և վերից-վար, մեկական տառերով է. երրորդը՝ աջ շրջանակից ներս, նրա կողքին, նույնպես վերից վար՝ մեկական տառերով։

Քանդակն սպիտակավուն քարի վրա է 82×82 սմ։ Կենտրոնում երկու խորաններ են, աջում Աստվածածնի և նրանից ձախ (դիտողի կողմից)՝ հրեշտակ։

Լուսանկ. տախտ. X, 38։

115. ՆՈՐԱՎԱՆՔ. հուշարձանի կենտրոնական սրահի հյուսիսային պատի արևմտյան վերին անկյունում (հյուսիսային սրահի մեջ) ագուցված պատկերաքանդակ կրող քարի վրա։



ԵՐԵՒԵՑԱՒՆՄԱ ԱԾ:Բ:ՀՐՇՏԵԿԱՒՔ . . . . . .

Առաջին տողը ձախ շրջանակի վրա է, վերից վար, մեկական տառերով գրված.

Երկրորդ և երրորդ տողերը՝ վերևում, կենտրոնական պատկերի գլխին, հատուկ տարածության վրա։ Չորրորդը աջ շրջանակին, նույնպես վերից վար և մեկական տառերով։

Քանդակն սպիտակավուն քարի վրա է, 103×59 սմ. բաղկացած երկու իրար լավ միացրած մասերից. կենտրոնում Աստված և երկու կողքերին հրեշտակներ։

116. ՆՈՐԱՎԱՆՔ. եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում. արտաքուստ. 3 տ.



ԿԱՆԿՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ Ի ՓՐԿ|ՈՒԹԻ
ՀՈԳՈՑ ՍՈՒՔԻԱՍ|ԻՆ. ԹՎ:ՊԾԶ:

Արձանագրությունից վեր փորագրված են երեք մանր խաչեր։

117. ՆՈՐԱՎԱՆՔ. եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում արտաքուստ. նախորդից ներքև. 2 տող.



ԱՅՍՆՇԱՆԿԱՆԿՆԼ
Ի ՓՐԿՈՒԹԻՀԳՅԱԿՈԲԻՆ

ԱՑՍ ՆՇԱՆ ԿԱՆԿՆԼԵԱՅԼ Ի ՓՐԿՈՒԹԻ
ՀՈԳՈՑ ԱԿՈԲԻՆ.

Արձանագրությունից վեր փորագրված են 7 փոքր խաչեր.
ԱԿՈԲԻՆ կարելի և ՑԱԿՈԲԻՆ կարդալ։

118. ՆՈՐԱՎԱՆՔ. եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային մասում դրսից. նախորդից ներքև. 2 տող.

ԿԱԿՆ.ԵՅԱՒՄԲՆՇՆՍԻՓՐԿՈՒ
ԹԻՀՈԳՈՒԴԻԼԻՆ

ԿԼՆԿՆԵՑԱՒ ՄԲ ՆՇԱՆՆ Ի
ՓԻՐԿՈՒԹԻ ՀՈԳՈ ԷԴԻԼԻՆ:

Արձանագրությունից վեր փորագրված են 3 փոքր խաչեր։

118. ՆՈՐԱՎԱՆՔ. հուշարձանի շուրջը մաքրելիս սրահի արևմտյան պատի տակ, դրսից, հայտնաբերված երեսպատման քարի վրա. 6 ա.

ՁՍԱՐԳԻՍ ԷՐԷՑ | ԵՒ ԳՈՂԹՆԱՑԻ | ԵՒ ԼԻԱՆՈՍ ՍՎԱՐԵՑԻ |
ՁՎԵՐՁԻՆ ԱՇԽԱՏ|ՈՂՔՍ ՑԻՇԵՑԷՔ | ԹՎ.: ՊԾԶ:

Ընկած է համարվում սրահի արևմտյան պատի հարավային անկյունից, որմնակամարի աջ կողմից։

Գ. Սարգսյան, «Էջմիածին», IV, 34, 1952 թ.

119. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) «ՔՐԱՏԱԿԻ ս. ՄԻՆԱՍ» եկեղեցու բեմի կամարի հյուսիսային կողին. ներքուստ. 2 տող.

ՀՃ
ՔՍ

:ՁՀ:ՔՍ.

. Հավանաբար եկեղեցու շինության թվականն է։

120. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) «ՔՐԱՏԱԿԻ ս. ՄԻՆԱՍ» եկեղեցու բեմի պատուհանի տակ, ներսից 5 տող.

ՅԱՌՆԱՅԵՍՎԱՄ
ԹԱԷՍՄԻԱՅԲԱԵՑԱ
ՁԻՄԱԳԵՄԲ.ԲՂԱՍԱՌ
ԻՄԱՁՔՍ:Բ:ՊԳՍԱՄՍԱ
ԵՑԻՄԱՄՍՆՌԹԵ:Ը:ԱԲԷՔԵ

ՑԱՆՈՒՆ ԱՑ ԵՍ ՎԱՐ|ԹԱՆԷՍ ՄԻԱՑԲԱ-
ՆԵՑԱ | , ՁԻՄ ԱՑԳԻՆ ՄԲ ՄԻՆԱՍԻՍ ՏՎ|Ի
ՄԻԱԲԱՆՔՍ :Բ: ՊԱՏԱՐԱԳ ՍԱՀՄԱՆ|ԵՑԻՆ
ՅԱՑՏՆՈՒԹԵ:Ը: ԱԲԷՔԻՆ:

121. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) «ՔՐԱՏԱԿԻ ս. ՄԻՆԱՍ» եկեղեցու բակի հյուսիս-արևելյան մասում, մեծ ժայռաբեկորի վրա քանդակած խաչի թևի տակ. 1 տող.

ԹՁՁ

ԹՎ. :ՁԺ:



122. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) «ՔՐԱՏԱԿԻ Ս. ՍԻՆԱՍ» եկեղեցու հյուսիսային պատի տակ, դրսից, կանգնած խաչքարի շրջանակներին.

ԵՍ ԱՆԱՆԻԱ ՄԻԱՑԿԵՑ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉԱ
ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԹՎ. :ՁԾԴ:

ՄԻԱՑԿԵՑ-համարում ենք խոսակցական լեզվի ձև։

123. ԲԱՐՁՐԱՎԱՆ (ԵՐԻՑԱԹՈՒՄԲ) գյուղամիջի եկեղեցու կարին, արևմայան կողմից կանգնեցրած խաչքարի տակին.

ՌԿ:ՀՅԳ: ԹՎ. :ՁՀԳ:

Եկեղեցին ավելի նոր է, նորոգված 1866-ին վերաբնակվողների կողմից։

ՀԱԼԻՃՈՐ ԵՎ ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ

Հաբանդ գավառի հնագույն գյուղերից է, աղբյուրների մեջ հիշատակված է 10-րդ դարի սկզբներից, իսկ Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ, իր հարկի չափով միջին մեծությամբ գյուղերի շարքումն է (8)։

Դեռևս 10-րդ դարում Սյունյաց Բաբդեն իշխանի դուստր Համասպրուհին Հալիձոր գյուղը նվիրել է Տաթևի վանքին, որը կրկին հաստատել է Տարսայիճ Օրբելյանը 1274 թ.։ Հալիձորը Տաթևի սեփականությունն էր համարվում մինչև 19-րդ դարն էլ։

Ստ. Օրբելյանի և հին հիշատակարանների մեջ գյուղի անունը գրվել է ՀԱԼԷ ձևով, հնում Հալիձոր գրելու դեպքում հասկացվում էր գյուղի շրջապատի ձորը. հետագայում գրվում է Հալի-ձոր և ի վերջո Հալիձոր։

Գյուղի միջում այժմ հին հուշարձաններ չկան, միակ եկեղեցին 17-րդ դարի սկզբի շենք է, թեև նրա հարավային մուտքի բարավորի վրա գրված է Թվ.:ՈԿ:, բայց ինչպես գրչության ոճը, նույնպես և շենքի ճարտարապետական առանձնահատկությունները այդ չեն հաստատում, պետք է լինի :ՌԿ: Գրիչը Ռ-ի վրա մոռացել է հորիզոնական ստեղը փորագրել։

Հալիձորից դուրս, նրա սահմաններում կան հետևյալ կարևոր հուշարձանները.

1. «Շրջիկ» կոչված վայրում, գյուղից 3—4 կիլոմետր հյուսիս-արևելք, Որոտան գետի ձախ ափի մոտ, այգիների մեջ, ժայռաբեկորի վրա կանգնած է մի խաչքար, 1265 թ. կալվածագիր-արձանագրությամբ. № 124։

2. «Խաչին խուրի» կամ Վնսարի հուշարձաններ, գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի արևելք. Շնհեր տանող ճամփից աջ, գտնվում է մի ժայռոտ բլուր, որի վրա մնում են մի ավերակ եկեղեցու հիմնապատեր, երեք խաչքարեր, մի քանի գերեզմանաքարեր և տների հիմնապատեր։

Այդ վայրը արձանագրության մեջ կոչված է ՎՆՍԱՐ-(=Վանասար=Վանքասար), և 13-րդ դարի վերջին Տարսայիճ Օրբելյանի կողմից նվիրվել է Վարդապետ=ճարտարապետ Սիրանեսին, որպես վարձատրություն նրա կառուցած շենքերի համար, (արձ. № 125)։ Այդտեղ են թաղված նաև Սիրանեսի հայրը և մայրը. արձ. № 126։

3. Հարանց անապատ. գտնվում է գյուղից մոտ 5 կիլոմետր հեռու, Որոտան գետի աջ ափին, լեռնալանջի հարթության վրա։ Անապատը բաղկացած է մի եկեղեցուց և գավթից, որոնց շուրջը խցերի և այլ շենքերի ավերակներ կան։ Այս բոլորը շրջապատված են պարսպով։ Վանքից մի քիչ դեպի հյուսիս ևս մի մատուռ՝ Պողոս—Պետրոս անվամբ։ Այս բոլոր շինությունները կառուցված են 17-րդ դարում։